

Դանիելյան Անի Կարենի

Ծնվել է 15.01.1991թ. Երևան քաղաքում: 2008-2012թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: 2012–2014թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում՝ այն ավարտելով գերազանցության դիպլոմով: 2014թ.-ին ընդունվել է նույն համալսարանի ասպիրանտուրան, որն ավարտել է 2018թ.-ին, թեկնածուական ատենախոսությունը մասնագիտական խորհրդի կողմից երաշխավորվել է պաշտպանության և պաշտպանության է նշանակվել 29.04.2019թ.-ին: 07.07.2009-30.07.2009թթ. աշխատել է ՀՀ Դատական դեպարտամենտ ՊԿՀ–ում՝ որպես Կենտրոնական մարմնի ցրիչ: 03.08.2009-18.03.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես գրասենյակի գործավար: 18.03.2011-31.01.2012թթ. աշխատել է «Տնտեսական անվտանգության ծառայության «ԱՎՏ-Ձ» ՍՊԸ–ում՝ որպես գլխավոր տնօրենի խորհրդականի օգնական: 01.03.2012-15.08.2012թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար, ապա՝ մինչև 14.03.2014թ.-ը՝ որպես դատավորի օգնական: 14.03.2014-01.09.2016թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես քրեական պալատի նախագահի ավագ օգնական: Այնուհետև մինչև 01.06.2018թ.-ը զբաղեցրել է ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչության պետի պաշտոնը՝ ստանալով առաջին դասի խորհրդականի դասային աստիճան: 01.06.2018թ.-ից առ այսօր աշխատում է «Դիջիթեյն» ՍՊԸ–ում՝ որպես իրավաբան: 2016թ.-ի սեպտեմբերից առ այսօր դասավանդում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում (քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն): 2017թ.-ից դասավանդում է ՀՀ Արդարադատության ակադեմիայում՝ դատավորների, իսկ 2018թ.-ին՝ նաև դատախազների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում: Հեղինակ (համահեղինակ) է 17 գիտական հոդվածների և մեկ մենագրության: Ազատ տիրապետում է անգլերենին և ռուսերենին, ինչպես նաև MS Office, Internet ծրագրերին: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Արամյան Մուշեղ Արթուրի

Ծնվել է 15.01.1991թ. քաղաք Երևանում: 2006-2012թթ. ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2009-2011թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում: 2012-2014թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում: 2013թ. ընդունվել և ավարտել է «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը: 2014թ. հունվարի 16-ից զբաղեցրել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնը: 2016թ. մայիսի 13-ից առ այսօր զբաղեցնում է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնը: 2018թ. սեպտեմբերի 4-ից աշխատում է «Մովսես Խորենացու» անվան համալսարանում՝ որպես «Քրեական իրավունքի» ամբիոնի դասախոս: 2019թ. սեպտեմբերի 2-ից աշխատում է ՀԱՊՀ՝ որպես «Հասարակագիտության» ամբիոնի դասախոս: Ամուսնացած չէ:



Հայկ Սերժիկի Իսրայելյան

Ծնվել է 26.10.1980թ.-ին՝ Երևան քաղաքում: 1987-1997թթ. սովորել է Երևանի թիվ 50 միջնակարգ դպրոցում: 1998-2000թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2001թ. ավարտել է Սլավոնական գործարարական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, 2005թ. ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Ստացել է դիպլոմավորված մասնագետի որակավորում: 2003-2005թթ. աշխատել է «Դուստր Արևիկ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2005թ. աշխատել է «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2006թ. հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան: 2007-2009թթ. աշխատել է «Տաշիր ինվեստ գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2009-2010թթ. աշխատել է «ՌՈՒԲԻԿՈՆ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2010-2016թթ. աշխատել է ՀՀ ՓՊ Հանրային պաշտպանի գրասենյակում՝ հանրային պաշտպան: 2017թ.-ից հանդիսանում է «Իսրայելյան փաստաբանական գրասենյակ»-ի հիմնադիր: 2018թ. դեկտեմբերից առ այսօր՝ «Հայաստանի կույրերի միավորում» ՀՀԿ իրավախորհրդատու: Գերազանց տիրապետում է հայերեն լեզվին, ռուսերենին՝ լավ:

Համակարգչային ծրագրերից տիրապետում է Microsoft Office (Word, Exel): Ամուսնացած է ունի դուստր: